## Ի՞նչպես է Աստված բժշկում քո ներքին վերքերը

### Ի՞նչպես է Աստված հոգում մեր կարիքները

**Մաս 2**

## Եհովա Ռաֆֆա "Ես բժշկող Աստված եմ"

*«Աստված բժշկում է կոտրած սիրտ ունեցողներին և փաթաթում է նրանց խոցերը:»* Սաղմոսներ 147:3

### *Աստծո բուժման ընթացքի քայլերը*

### 1. Արտահայտիր քո ցավը

*«Բերանս փակեցի պապանձվելով… և ցավս շատ գրգռվեց: Սիրտս տաքացավ իմ մեջ. մտածելիս կրակ էր վառվում ինձանում.»* Սաղմոսներ 39:2-3

*«Երբ ես լուռ մնացի, ոսկորներս մաշվեցին ամեն օրվա հառաչելուց.»* Սաղմոսներ 32:3

*«Ո՛վ իր անձն իր <u>բարկությամբ պատառող</u>…»* Հոբ 18:4

### 2. Արձակիր նրանց որ քեզ վիրավորել են

*«Որևէ մեկին չարի դիմաց չար մի՛ հատուցեք… Ինքներդ վրեժխնդիր մի՛ եղեք, սիրելինե՛ր, այլ Աստծու բարկությա՛նը տեղ տվեք, որովհետև գրված է. «Իմն է վրեժխնդրությունը, ես էլ կհատուցեմ» ասում է Տերը:»* Հռոմեացիներին 12:17-19

*«(Հիսուս)…չարչարվելիս չէր սպառնում, այլ <u>հանձնվեց արդար դատավորին</u>:»* Ա Պետրոս 2:23

*«… <u>դառնության արմատ</u> թող չաճի ու ոչ ոքի թող նեղություն չտա, և <u>դրանով շատերը չպղծվեն</u>.»* Եբրայեցիներին 12:15

### 3. Հին մտածելակերպդ փոխադրիր Աստծո ճշմարտությունով

*«Վերափոխվե՛ք ձեր մտքի նորոգությամբ:»* Հռոմեացիներին 12:2

*«Ինչպես որ մեզ նրա միջոցով ընտրեց…որպեսզի մենք <u>սուրբ և անարատ լինենք նրա առաջ սիրո մեջ</u>:»* Եփեսացիներին 1:4

### 4. Կենտրոնացիր ապագային

*« Եթե դու <u>քո սիրտն ուղղես</u> և ձեռքերդ դեպի <u>իրեն</u> տարածես… Ահա այն ժամանակ անարատ <u>երեսդ կբարձրացնես</u>, հաստատուն կլինես ու չես վախենա: <u>Որովհետև թշվառությունը կմոռանաս, այն անցած ջրերի պես կհիշես</u>:»* Հոբ 11:13-16

*«Քո աչքերը թող առաջ նայեն, և քո հայացքը թող ուղիղ լինի:»* Առակներ 4:25

### 5. Օգնիր մարդկանց

*«Աստված մեր բոլոր նեղությունների մեջ մխիթարում է մեզ, որպեսզի մենք էլ <u>կարողանանք մխիթարել նրանց</u>, ովքեր ամեն տեսակ նեղության մեջ են, ա՛յն մխիթարությամբ, որով մենք մխիթարվում ենք Աստծուց:»* Բ Կորնթացիներին 1:4

*«Եթե մեկը Քրիստոսի մեջ է, նոր ստեղծված է. հները անցան, ահա ամեն բան նոր եղավ:»* Բ Կորնթացիներին 5:17

*Հաջորդ Քարոզի Թէման՝*

ՈՐՏԵՂԻՑ ՍՏԱՆԱԼ ՁԵԶ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԷՆԵՐԳԻԱՆ

**Հովիվ Սարօ Խաչիկեան**